

Կրեմլին երէկ յայտնած է, թէ նախագահ Վլատիմիր Փութին աւելի քան 6000 պատգամ ստացած է՝ իբրեւ Կօրակցութիւն Իրաքի պատերազմին դէմ իր վճռակամ կեցումները համար: Կրեմլինի արտասովոր հաղորդագրութիւնը կը հրապարակուէր, երբ Մոսկուայի մէջ թափ կը ստանար պատերազմին դէմ արտայայտութիւնները: Մինչ այդ, չնչին ըմբոստ պատուիրակ Սայամպէր Մայկով երէկ Փութինը ամբաստանած է կեղծաւորութեան յանցանքով, մէկ կողմէ Իրաքի մէջ խաղաղութիւն եւ դիւանագիտութիւն հետապնդելով, միւս կողմէ մերժելով ռուսական ուժերը հեռացնել Չեչենիայէն: Ան ըմբոստներու համաձայնի կայքին ճամբով դիտել տուած է, որ մինչ Փութին բանակցութիւններու կոչ կ'ուղղէ Իրաքի գծով, ան կը մերժէ բանակցի Չեչենիոյ օրինակաւն ղեկավարութեան հետ:

ՊԱՂՏԱՏ ՎԱՅՐԱԳՕՐԵՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ՌՄԲԱԿՈՏՈՒԻԼ ՕԴԵՆ

ԴԱՇՆԱԿԻՑ ՈՒԺԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՑԱՍԱՔԱՅԻՆ ԾԱՆՐԱԿՇԻՌ ԲԱԽՈՒՄՆԵՐ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԿԵՆ ԻՐԱՔԻ ՇԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՇԱՎԱԳՈՒՆԴԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Ամերիկեան գլխաւորութեամբ դաշնակից ուժերու կողմէ վայրագ ուժեղացող շարունակուեցան երէկ՝ յատկապէս Պաղատաւի եւ անոր շրջակայ շրջաններուն մէջ, մինչ ղեկավար մայրաքաղաք արշաւող ամերիկեան ցամաքային ուժերը առաջին անգամ ըլլալով իրաքեան հանրապետական պահակազույնի անդամներու հետ «ծանրակշիռ» բախումներ կ'ունենան, իսկ բրիտանական ուժեր թափ կուտային հարաւային Պաղատաւ նաւահանգիստին վրայ իրենց մէծ յարձակումին:



Ամերիկացի զինուորացի իրաքեան անգապտից մէջ, Պաղատաւի 60 քմ. հեռաւորութեան

ստեղծել: Ան պահանջած է դաշնակից ուժերէն, որ անմիջապէս մեկնեն երկրէն, դարձեալ շեշտելով, որ օտար հապարաւոր կամաւորներ Իրաք կը գտնուին եւ պատրաստ են անմասպանական գործողութիւններու ձեռնարկելու: Ան աւելցուցած է, որ դաշնակից ուժերը «բոլոր ճակատներուն վրայ կ'ընդունեն եւ կը նախանշեն» իրաքցի քաղաքայիններու եւ քիմիոտրակայաններու ուժեղացումներուն դիմաց: Ծարձ էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՅԼ ՄԸ ԱՌԱՋ Ե ԱԶՐՊԷՅՏԱՆԵՆ Կ'ԸՍԷ ՌԱՍԸԼ ՃՈՆՍԹԸՆ

Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի գարնանային նստաշրջանի երէկուան նիստին ներկայացուած է Եւրոպական խորհուրդի ղեկավար անգլիացի Պաղատաւի նախագահական ընտրութիւններուն մասին: Հայաստանի Ազգային ժողովի արտաքին յարա-

բերութիւններու յանձնաժողովի նախագահ Յովհաննէս Յովհաննիսեան «ԱՐՄԷՆՓՐԷՍ» լրատու գործակալութեան հետ Սթրասպուրկէն հեռաձայնային հարցազրույցի ընթացքին հարցրած է, թէ Ռասլ Ճոնսթըն առարկայականօրէն ներկայացուցած է իր դիտարկումներուն արդիւնքը:

ՆԱԽԱՐԱՐ ՔԱՐԱՄ ԵՒ Հ. Յ. Դ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՆԵՐՔԻՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատգամավորութիւն մը, գոր կը պիտաւորէր ներկայացուել ընկ. Յովհիկ Մխիթարեան, երէկ այցելեց զրօսաշրջութեան նախարար տղթ. Քարամ Քարամի: Քննարկուեցան երկրին հրատապ հարցերը, ներքին բեմի իրադարձութիւնները, նախարարութեան առնչուող խնդիրներ եւ շրջանային հարցեր, յատկապէս իրաքեան պատերազմի նորագոյն զարգացումներուն յոյսին տակ:

Նիստին ելոյթ ունեցած են Հայկական եւ ազրպէյճանական պատուիրակութիւններու ներկայացուցիչներ: Ազրպէյճանական պատուիրակութեան ղեկավարը՝ Ազրպէյճանի նախագահի որդին՝ Իլհամ Ալիեւ փորձած է Հայաստանի նախագահական ընտրութիւններուն առնչուող խնդիրները առնչել Հայաստանի վերաբերելու այն խնդիրներուն, որոնք յաճախ կը փորձուին շահարկուիլ Պաղատաւի կողմէ: Ըստ Յովհաննէս Յովհաննիսեանի, ազրպէյճանցիներու ելոյթները դատապարտուած են նիստին մասնակից պատգամավորներէն շատերու կողմէ: Ռուսիոյ Պետական Տուժարանի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Տմիթրի Ռոկոլային, Պետական Տուժարանի պատգամավոր Վլատիմիր Ժիրինովսկի եւ Ֆրանսայի պատգամավոր Ֆրանսուա Ռոշպուլեան սխալ եւ ոչ կառուցողական որակած են ազրպէյճանական ելոյթները: «Իր եզրակարգի խօսքին մէջ, Լորտ Ռասլ Ճոնսթընը նշած է, թէ ղեկավարութեանը զօրով որոշ թերութիւններ արձանագրեց, սակայն ատիկա չի նշանակեր, որ Հայաստան չընթանար ժողովրդավարացման ճանապարհով», յայտնած է Յովհաննիսեան, դիտել տալով, որ Լորտ Ռասլ Ճոնսթըն իր խօսքը ուղղելով ազրպէյճանցիներուն նաեւ յայտնած է, թէ անոնք իրաւունք չունին բաղդատութիւն կատարելու Ազրպէյճանի եւ Հայաստանի միջեւ, որովհետեւ «Հայաստան քայլ մը առաջ է Ազրպէյճանէն»: Ցատկանշական է նաեւ այն, որ Լորտին այս խօսքերով աւարտած է ամբողջ նիստը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿՐԵԱՅ ՕԳՏՈՒԻԼ ԻՐԱՔԻ ԴԵՄ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԵՆ

Թուրքիոյ արտաքին

ԹՈՒՐԻՔԻԱ ՄԻԵՒՆՈՅՆ ՅԱՆԿԵՐԳԸ ԿԸ ԿՐԿՆԵ ԱՆԳԱՐԱՆ ԵՐԵՒԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ «ԲՆԱԿԱՆՈՆԱՅՄԱՆ» ՀԱՄԱՐ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան կողմէս եւ Միջին Ասիոյ վարչութեան տնօրէնի տեղակալ էրթան Թեքթըր «Մեդիամաքս» լրատու գործակալութեան յայտնած է, թէ Թուրքիա կը ցանկայ, որ Ռոպէրթ Քոչարեանի Հայաստանի նախագահ վերնադասութեամբ նոր հանգրուան սկսի երկու երկիրներու յարաբերութիւններուն մէջ: Այսուհանդերձ, Թուրքիա չի ազգէտին համոզումով, «երկկողմանի յարաբերութեան բարելաման գործընթացի առաջին քայլը պէտք է առնել Հայաստանը»: Թեքթըրը միեւնոյն քննարկելով իր կրկնելով, Թեքթըրը թուած է չարք մը խնդիրներ, որոնք, ըստ Անգարայի, պատճառ կը հանդիսանան, որ Թուրքիա դիւանագիտական կայքի հետ: Առաջին խնդիրը, էրթան Թեքթըրի համաձայն, այն է, որ «Հայաստան չի ճանչնար 1921ի թուրք-խորհրդային դաշինքները եւ հետեւաբար չի ճանչնար Թուրքիոյ տարածքային ամբողջականութիւնը»: Երկրորդ պատճառը Հայկական Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ Հայաստանի արտաքին աշխուժ քաղաքականութիւնն է: Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու չզոյւլութեան երրորդ պատճառը, միշտ ըստ Թուրքիայի նախագահին, այն է, որ «Հայաստան իր զօրքերը դուրս չի բերեր ազրպէյճանական տարածքներէն»:

Գործոց նախարարութեան պաշտօնատարին խօսքերով, Լեռնային Ղարաբաղի տագնապը հիւսուցող խոչընդոտը կը հանդիսանայ Հարաւային Կովկասի մէջ քաղաքական կայունութեան հաստատման համար: «Թուրքիա աշխուժօրէն կը մասնակցի ԵԱՀԿի Մինսքի խմբակի աշխատանքին, որուն մենք կուտանք մեծ նշանակութիւն: Մենք կը պաշտպանենք նաեւ Ազրպէյճանի եւ Հայաստանի ներկայացուցիչներու երկկողմանի հանդիպումները», յայտնած է Թեքթըրը, աւելցնելով, որ Թուրքիա պատրաստ է ընդունելու տագնապի այնպիսի լուծում մը, որ շահաւէտ կ'ըլլայ երկու կողմերուն համար: Անգարա պատրաստ է մասնակցելու Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման նոր գործընթացներու կիրառման, ընդգծած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարը:

ԱԿՆԱՐԿ ԼՂՀ ԵՒ ԻՐԱՔԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Երէկուան մեր համարով կը հաղորդէինք, որ Լեռնային Ղարաբաղի կառավարութեան արդիւնք գործող ներգաղթի եւ գաղթականներու հարցերու վարչութեան պետ Սերժ Ամիրխանեան յայտնած էր, թէ Ստեփանակերտը Իրաքի հայերու կողմէ վերաբնակեցման որեւէ դիմում չէ ստացած: Ան միաժամանակ կը յատկացնէր, որ նման դիմում եթէ կատարուէր եւ ԼՂՀ իշխանութիւններէն ապագասան խնդրուէր, ժրտի ուխտի սահմաններուն մէջ հարցը կը քննուէր եւ Ստեփանակերտը կ'աջակցէր գաղթականներուն իր կարելիութեան սահմաններուն մէջ:

Այս լրատուութիւնը կը հետեւէր ԼՂՀ նախագահ Արկարի Ղուկասեանի այն յայտարարութեան, ըստ որուն՝ կը վերահաստատուէր միջազգային ճանաչման համար ԼՂՀ իշխանութիւններուն տանելիք խաղաղ պայքարի աննախնայ երթը: Տակաւին միջազգային ճանաչում չունեցող ԼՂՀ միջազգային ինդիպներուն նկատմամբ դիրքորոշում կ'որդեգրէր միջազգային համաձայնութիւններու համապատասխան որոշումներով եւ տրամադրութիւններով:

Ինչն էր շարժառիթը Ամիրխանեանի վերոյիշեալ յայտարարութեան: Ազրպէյճանի պետական քարոզչամեթոտային հերթական յարձակումը՝ ԼՂՀ իշխանութիւններուն դէմ: Արդարեւ, ազրպէյճանցիները կը փորձէին աշխարհը կլանած ամերիկեան զինուորական ռազմարշախի ստեղծած տագնապի համընդհանուր մթնոլորտին օգտուիլ եւ ԼՂՀ ի տագնապը բերել քաղաքական լուսարձակներու տակ: Յոյց տալով, որ ԼՂՀ իշխանութիւնները կը շահագործեն Իրաքի պատերազմը եւ կ'աշխատին «ապրապէյճանական տարածքը հայացնել»:

Ամիրխանեանի յայտարարութիւնը կը համընկնէր Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի իրաքահայերը ամենայն դիւրութեամբ ընդունելու յայտարարութեան: Ամերիկեան պիտի չըլլար ռեւէ իրաքահայու համար դիմել Հայաստան կամ Արցախ ժամանակաւոր թէ մնայուն հաստատուելու համար. նոյնքան անբնական չէն թէ՛ Հայաստանի եւ թէ՛ ԼՂՀ իշխանութիւններուն կողմէ ամենայն օժանդակութիւն եւ աջակցութիւն ցուցաբերելու պաշտօնական յայտարարութիւնները: Հակառակ քարոզչական ընդհանուր ռազմավարութեան մէջ թերեւս անակալ չէր Ազրպէյճանի կանխահաս անհանգստութիւնը ԼՂՀ իրաքահայ պանդուխտութիւնը ԼՂՀ նախագահին վերաբերելով թէ Արցախեան իշխանութիւնները պիտի շարունակեն պայքարիլ հակամարտութեան խաղաղ կարգաւորման ճամբով ԼՂՀ միջազգային ճանաչում ապահովելու համար. արդէն բարձր ցուցանիշ է Արցախի իշխանութիւններու քաղաքական պետական մտածողութեան:

Յամենայնդէպ Ամիրխանեանի պատասխան յայտարարութիւնը բարացուցական է ազրպէյճանական պատեղեկատուութեան մակարդակաւոր պատասխան տալու տեսակետին. իսկ այս առթիւ՝ նման ինդիպներու նկատմամբ միջազգային համաձայնութիւններու համապատասխան քաղաքական քայլեր առնելու յայտարարութեան վերակցող ԼՂՀ նախագահին վերաբերելով թէ Արցախեան իշխանութիւնները պիտի շարունակեն պայքարիլ հակամարտութեան խաղաղ կարգաւորման ճամբով ԼՂՀ միջազգային ճանաչում ապահովելու համար. արդէն բարձր ցուցանիշ է Արցախի իշխանութիւններու քաղաքական պետական մտածողութեան: «Ա.»

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿԸ ՇԵՇՏԷ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՔԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԳԾՈՎ

Նախագահ Գործի Լահուտ երկնի Պապատայի մէջ ընդունեց պետական եւ բարձրաստիճան բազմաթիւ անձնակազմի անդամներ, որոնց հետ քննարկեց տեղական եւ շրջանային վերջին իրադարձութիւնները:

Նախագահ Լահուտ նշեց, որ իրաքի դէմ ամերիկեան պատերազմը թեւեւ կոտորած է իր 12րդ օրը եւ հասած է շատ վտանգաւոր կացութեան եւ անհրաժեշտ է միջազգային անմիջական եւ գործնական միջամտութիւն:

Նախագահ Լահուտ երբ գործնական քայլ կ'ըսէ, կը մատնանշէ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի որոշումներուն գործադրութեան, որուն հիմամբ իրաք կը պահէ իր գերիշխանութիւնը, անկախութիւնը եւ հողերու ամբողջականութիւնը:

Նախագահ Լահուտ նշեց, որ ամբողջ աշխարհին մէջ ոճիրին, աղէտներուն, քանդուածին եւ բռնարարներուն վերջ տալու միակ ձեւն է խաղաղութեան բանակցութիւններու ձեռնարկելը:

Նախագահ Լահուտ յայտնեց, որ Սուրիոյ ուղղուած ամբաստանութիւններն ու անոր դէմ արշաւները երբեք փոփոխութեան պիտի չկարենան ենթարկել իրանանցի եւ սուրիացի ժողովուրդներուն եւ ղեկավարութեանց կեցուածքը:

Շարք՝ էջ 3

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴ ԸՆՆԱՐԿԵՑ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՂԹԱԾՐԱՐԸ



Նախարարաց խորհուրդը երէկ Թանգարանի շրջանի իր կէտրոնատեղիին մէջ գումարեց արտակարգ ժողով մը, որուն ընթացքին օրակարգի վրայ ունեցաւ միայն ելեկտրականութեան ընկերութեան թղթածրարը:

Ֆարանն եւ Սլէյման Ֆրեմծիտ:

Նախագահ Գործի Լահուտ պահանջեց տալ յստակ որոշումներ եւ գործնական լուծումներ՝ ելեկտրականութեան հոսանքի ընդհատման հարցը լուծելու համար, որովհետեւ ելեկտրականութեան չգոյութիւնը ուղղակի կ'ազդէ քաղաքացիներուն առօրեային:

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալաուն հակիրճ ձեռնարկ արեւելեան շրջանի վարչապետի հետ զրոյսի ընթացքին:

Գ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Օ Թ Ո Պ Ի Մ Ի Ա Ր Կ Ա Ց Գ Վ Ի Ր Ա Ի Ո Ր

Երէկ, Ֆանարի մէջ, «Մոն Լա Սալ» վարձարանի մէկ օթոպիւսք շրջած է՝ աշակերտները վարձարանէն տուն փոխադրելու պահուն:

50 աշակերտ փոխադրող օթոպիւսի վարձարանը չէ կրցած ղեկը զսպել, արգելակներու խանգարումի հետեւանքով:

Արձանագրուած են 9 վիրաւորներ, որոնցմէ երկուքը հայեր՝ Անթուան Փափապեան

եւ Յարութ Ղապարեան, որոնք անմիջապէս փոխադրուած են հիւանդանոց: Ներքին ապահովութեան եւ քաղաքային պաշտպանութեան խմբակներ հասած են դէպքին վայրը եւ կատարած՝ հարկ եղած դասաւորումները:

ԲԱՆՏԱԻՈՐՈՒԿ

Կարօ եւ Շրակ Գըլըպոզեաններ բախտաւորուած են քրոջմով մը՝ **ՆԱՐՕՏ** 27 Մարտ 2003

ԿՈՒՉՈՒԻ

Ոսկերչատուն մը կարիք ունի փորձառու եւ վարպետ աղամանաշարներու, դիմել՝ հեռ. 03 - 571132:

ԳՐԱԻՈՒԿ ՕՐ

ԿԱՍԱԶԳԱՅԻՆԻ Մ. ԵՒ ԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍԱՅՐԵՐՈՒ ՕՐ 2 ՄԱՅԻՍ 2003

ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱԲԱԾԻՆ

Նախորդ, երկաթե կամուրջի մօտ. 3 մնջասենեակ, հիւրասենեակ, ձաշասենեակ եւ յարակից մասեր, 2րդ յարկ: Դիմել՝ հեռ. 03 - 410718:

ԿՈՒՉՈՒԻ

ՔԵՍԱՊԻ խնձորի ընտիր քաջախ արտադրող ԶԵՇԻՇԵԱՆ հաստատութիւնը Լիբանանի շուկային համար կը փնտռէ ներկայացուցիչ-ցրուիչ ընկերութիւն մը. դիմել՝ հեռ. 02/93/524255 քիւիճ (Քեսապ):

ԿՈՒՉՈՒԻ

Պուրճ Կամուրջի մէջ, վաճառատն մը համար վաճառող օրիորդ մը: Դիմել՝ հեռ. 01 - 326890:

ԿՈՒՉՈՒԻ

Շատատուրի մը, Տորայի շրջան, իր հազուստի ցուցադրարահին համար կարիք ունի վաճառող օրիորդի մը, դիմել՝ հեռ. 01 260975 եւ 01 268301:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Արուսեակ Գուզուլեան Տէր եւ տիկին Յակոբ Գուզուլեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Ներսէս Գուզուլեան եւ զաւակունք Տիկին Խօժնի Պաղտասարեան եւ զաւակունք Տիկին Եփրեմ Մելքոնեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Կարպիս Գուզուլեան եւ զաւակունք Գուզուլեան ընտանիք Պարտուճեան ընտանիք Տէր Խօրեմեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, աներհօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր, մօրեղբոր, թոռային եւ հարազատին՝

ԲԻԻԶԱՆԴ ԳՈՒԶՈՒՅԵԱՆԻ (ՇՆԵԱԿ՝ 1926ԻՆ)

Մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 31 Մարտ 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Զորեղարթի, 2 Ապրիլ 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուրի Ազգային գերեզմանատունը: Ներկայ ընդունելի իրրեւ մահագոյ: Յուշարկաւորութիւնները կ'ընկուտուին եկեղեցւոյ սրահը:

ՄԱՀԱԶԳ

Տէր եւ տիկին Գէորգ Քէչիշեան եւ զաւակը՝ Վիգէն Տիար Քրիստափոր Քէչիշեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Դրօ Քէչիշեան եւ զաւակունք Մարօ, Նուարդ, Սիլվա եւ Զարեհ Քէչիշեաններ Տէր եւ տիկին Անդրանիկ Ուրֆալեան եւ զաւակունք Քէչիշեան ընտանիք Ուրֆալեան ընտանիք Հաստատ ընտանիք Շէրպէթեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ, մեծ մօր, հօրաքրոջ եւ հարազատին՝

ՄԻՐԱՆ ԲԷՇԻՇԵԱՆԻ (ՇՆԵԱԿ՝ ՈՒՐՖԱԼԵԱՆ, Մուսա Լեռ 1925ԻՆ)

Մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 28 Մարտ 2003ին, Լոս Անճելըսի մէջ:

Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 1 Ապրիլ, առաւօտեան ժամը 9:00ին, Հովիտի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ, Լոս Անճելըս:

- Ներկայ ընդունելի իրրեւ մահագոյ: Յուշարկաւորութիւնները կ'ընդունուին հանգուցեալին պակին՝ Գէորգ Քէչիշեանի բնակարանը, Հաննա Մուսա շէնք, Բ. յարկ, Փիեռ Ժրմայիլ թաղ, Մերսիս Ընկերութեան ետեւի թաղը, հեռ. 01-895321, Երեքշաբթի 1 եւ Զորեղարթի 2 Ապրիլին: Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել Այնճարի Ազգային Յանաջ քոլէճին:

ՄԱՀԱԶԳ

Հ. Յ. Դ. «Գարեգին Նժդեհ» կոմիտէն կը գուժէ իր շրջանի հաւատաւոր ընկերներէն՝

ՅԱԿՈԲ ՊԶՏԻԿԵԱՆԻ

Մահը, որ պատահեցաւ Կիրակի, 30 Մարտ 2003ին:

ՄԱՀԱԶԳ

Տէր եւ տիկին Սէմ Պատիկեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Միօ Աբէլեան եւ զաւակունք Տիկին Մարի Թութիկեան Տիկին Աննա Պատիկեան Տէր եւ տիկին Սէմ Վ. Պատիկեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Վիգէն Վ. Պատիկեան եւ զաւակունք Տիկին Ովսաննա Պաքալեան Տիկին Մարի Նաճարեան Աբէլեան ընտանիք Այնթապեան ընտանիք Թութիկեան ընտանիք Պէօլմուշաբեան ընտանիք Նաճարեան ընտանիք Պաքալեան ընտանիք Բասլան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, աներհօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր, մօրեղբոր, թոռային եւ հարազատին՝

ՅԱԿՈԲ ՊԶՏԻԿԵԱՆԻ (ՇՆԵԱԿ՝ ԸՆՏԱԿ, 1923ԻՆ)

Մահը, որ պատահեցաւ Կիրակի, 30 Մարտ 2003ին, առաւօտեան ժամը 7:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 1 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 3:30ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, Զորեղարթի 2, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրոնտի Շրպակի շայ Աւետարանական գերեզմանատունը: Ներկայ ընդունելի իրրեւ մահագոյ: Յուշարկաւորութիւնները կ'ընդունուին հանգուցեալին դստեր բնակարանը, Ռապուէ (Ռուս պատրիարքարանի շրջան) Զորեղարթի 2 եւ Հինգշաբթի 3 Մարտին: Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել կրթական հաստատութիւններու:

ՆԵՄԱՐ ԼՈՒԾՈՒՄ ԶԷ ՓԻԹԸՐ ԱՌՆԵԹԸ ԼՈՒՅՆԵԼԸ

Ամերիկեան պատկերասփիւռի «Էն. Պի. Սի.» կայանի հանրածանօթ թղթակից Փիթըր Առնէթը երէկ գործէ արձակուեցաւ, որովհետեւ հարցապրոց մը ունեցած էր իրաքեան պատկերասփիւռի կայանին հետ, ուր ըսած էր, թէ պատերազմի դիմելու ամերիկեալներին օրագիրը ձախողած է:

Արդար պէտք է ըլլալ եւ ընդունիլ, որ տեղ մը «Էն. Պի. Սի.»-ի վճիռը տարօրինակ կամ անսպասելի չէ: Ի՞նչ պէտք էր ըլլար այլապէս կայանին տնօրէնութեան կեցւածքը: Պատերազմի այս թէժ օրերուն տեղ մը հաւանաբար նոյնիսկ դատաւարտելի է «թշնամի» կայանէ մը իր իսկ երկրին քայլը քննադատելու Առնէթի նախաձեռնութիւնը՝ նոյնիսկ եթէ այդ քայլը իրապէս սխալ է:

Այսուհանդերձ կայ նաեւ մետալին միւս երեսը: Պէտք չէ մոռնալ, որ խօսողը թղթակից է եւ թղթակիցը պատ մտածողութեան տէր մարդ է, մանաւանդ որ Արեւմուտքի մէջ տեղեկատուական մարպէ կադապարած չէ կ'ըսեն... Բայց փաստօրէն այդպէս չէ եւ ահաւասիկ փայլուն թղթակից մը քաւութեան նոյնապ կը դառնայ այդ կարծեցեալ պատաստութեան...

Այս բոլորէն անդին, սակայն, կայ էականը: Հարց դարձեալ այլ բան չէ, եթէ ոչ ճշմարտութիւնները քողարկելու ամերիկեան եւ բրիտանական քանաւոր թէ գրաւոր մամուլին ապարդիւն ճիգը: Առնէթի արտայայտութիւնները որովհետեւ ճշմարիտ են ու անհերքելի, հեշտ չհնչեցին «Էն. Պի. Սի.»-ի վարիչներուն սկանջին, մանաւանդ որ նաեւ այդ վարիչները իրենց կարգին հաշուետու են բո՛ւն վարիչներուն, որոնք ուրիշ մէկը չեն եթէ ոչ քննադատող որոշումին տէրերը...

Ըսինք. կրնայ ըլլալ, որ Առնէթի արտայայտութեան թայմինկը անյարմար էր: Ի վերջոյ տեղ մը ճիշդ է ժողովրդային առածը, որուն համաձայն՝ ամէն իրականութիւն չ'ըստիր: Բայց արեւօ՞ք Առնէթը լռեցնելով հարցը լուծուեցաւ: Բնականաբար ո՛չ, որովհետեւ Միացեալ Նահանգներու եւ Բրիտանիոյ տարածքին միլիոնաւոր Առնէթներ փողոց իջած կ'աղաղակեն շատ աւելի խիստ ու ծանր իրականութիւններ, քան նոյնիսկ Առնէթը: Ո՞վ պիտի համարձակի լռեցնել պանոնը: «Էն. Պի. Սի.» այն մասին պէտք է մտածէ եւ ա՛յս իմաստով մտաւորաւոր, որովհետեւ անոնք իր պաշտօնեաները չեն եւ ան հնարաւորութիւն չունի պանոնը գործէ արձակելու...

Հասա՞ յաչս հանրային կարծիքին արեւմտեան մամուլին հեղինակաւորութիւնը, անոր վարկին ահաւոր անկումը: Պատասխանը դարձեալ թող տան նոյնիսկ «Էն. Պի. Սի.»ները...

ՀՐԱՉ ՎԱՐՄԵՆԵՏԵԱՆ

ԳՐԱԻՈՒԿ ՕՐ ԿԱՍԱԶԳԱՅԻՆԻ «ԸՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԻԱՆԷ» ՊԱՐԱՄՈՒՄԲ ԿԱԼԱ 24 ՄԱՅԻՍ 2003

ԳՐԱԻՈՒԿ ՕՐ ԿԱՍԱԶԳԱՅԻՆԻ Մ. ԵՒ ԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԸԵՐՄԵՍ 16, 17, 18 ՄԱՅԻՍ 2003

ԱՂԲԱԼԵԱՆ Հ. Մ. Բ. Մ. ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ԲԱՅՈՒՄ - ՅՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՆ ABBAH KUNG FU ՄԱՐՏԱՐՈՒԵՍԻ ՍԱՐԶՈՒՄՆԵՐՈՒՆ Տեղի կ'ունենայ Շաբաթ 5 ԱՊՐԻԼ 2003ի երեկոյեան ժամը 6:00ին Ընդամալորութեամբ Մեծ Վարպետ ԿԱՐՕ ԸԷՊԱՊՁԵԱՆԻ Մասնակցութեամբ MASTER CHEN JAO YOUNGԻ • Մարզումները կը սկսին՝ Շաբաթ, 12 Ապրիլ 2003ին: • Արձանագրութիւններ՝ Ըամալիի տնօրէնութեան մօտ, հեռ. 04-722902/03: ՀՐԱԻՐ ՄԱՐԶԱՄԵՐ ՀԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ

ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ԲԱՅՈՒՄ - ՅՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՆ ABBAH KUNG FU ՄԱՐՏԱՐՈՒԵՍԻ ՍԱՐԶՈՒՄՆԵՐՈՒՆ Տեղի կ'ունենայ Շաբաթ 5 ԱՊՐԻԼ 2003ի երեկոյեան ժամը 6:00ին Ընդամալորութեամբ Մեծ Վարպետ ԿԱՐՕ ԸԷՊԱՊՁԵԱՆԻ Մասնակցութեամբ MASTER CHEN JAO YOUNGԻ • Մարզումները կը սկսին՝ Շաբաթ, 12 Ապրիլ 2003ին: • Արձանագրութիւններ՝ Ըամալիի տնօրէնութեան մօտ, հեռ. 04-722902/03: ՀՐԱԻՐ ՄԱՐԶԱՄԵՐ ՀԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ

ՀԱՐԻՐԻ ՊՈԼՈՒԹԻՆԻ ԵՒ ԼՐ ՔՈՒՐԹԻԷՒ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ԻՐԱՔԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԱՌՆՁՈՒՈՂ ՀԱՐՅԵՐ



Հարիրի եւ Պոլոթին

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի երէկ Քորաթթէ մէջ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ, Ֆրանսայի, Թուրքի եւ Թուրքիոյ ղեկավարները, որոնց հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները եւ անոնց պարզեց Եւրոպայ կատարած իր քաղաքական շրջապտոյտին արդիւնքները:

Վարչապետ Հարիրի Ռուսիոյ ղեկավար Պորիս Պոլոթինի հետ քննարկեց իր Ռուսիա այցելութեան արդիւնքները: Հարիրի յայտնեց, որ Քրեմլին մէջ իրաքի դէմ ամերիկեւերի տանկային պատերազմին նկատմամբ քննարկումները ընթացած են զրական մթնոլորտի մէջ:

Վարչապետ Հարիրի աւելցուց, որ Պաղ Պատերազմի աւարտէն ետք իրաքի գարգացումները կը նկատուին ամէնէն վտանգաւոր իրադարձութիւնները:

Պոլոթին վստահեցուց, որ Ռուսիա հակառակ իրաքի դէմ պատերազմին գծով իր մերժողական կեցւածքին, տակաւին կը շարունակէ Միացեալ Նահանգներու հետ երկխօսութիւնները՝ հասնելու համար իրաքեան տագնապին խաղաղ լուծում ապահովող արդիւնքի մը:

Վարչապետ Հարիրի Ֆրանսայի ղեկավար Ֆրիւիք Լը Բուրբիէի հետ քննարկեց Ելիզէի մէջ իր հանդիպումին արդիւնքները: Լը Բուրբիէ յայտնեց, թէ Լիբանանցիները բախտաւոր են, որովհետեւ ուղղակիորէն չեն ազդուիր իրաքի դէմ պատերազմին:

ՊԵՐՐԻ ՊԵԹԸԼԻ ԵՒ ՔԻՆՉԸՆԻ ՀԵՏ ԻՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒՆ ԸՆԹԱՅՔԻՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑ ԻՐԱՔԻ ՀԱՐՅՈՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԵՅՈՒՄԾՔՆԵՐԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու ղեկավար Վինսընթ Պէթըլը, որուն հետ արծարծեց իրանի եւ Սուրիոյ դէմ ուղղուած ամերիկեան սպառնալիքները:

Պէթըլ յայտնեց, որ ամերիկեան յայտարարութիւնները կ'իյնան հարցադրումներու շրջագծէն ներս եւ ոչ՝ դատապարտումներու:

Հանդիպումէն ետք Պէթըլ ըսաւ, որ Պըրրիի հետ քննարկած է նաեւ շրջանային ընդհանուր իրադարձութիւնները, ինչպէս նաեւ իրաքի դէմ ամերիկեւերի տանկային պատերազմին նորագոյն պարգացումները:

Պըրրի իր կարգին շեշտեց, որ Լիբանանի իրաքի դէմ գործադրուող ամերիկեան պատերազմը կը մերժէ:

Պըրրի երէկ ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Բրիտանիոյ ղեկավար Ռիչարտ Քինչընը, որուն հետ քննարկեց իրաքի դէմ պատերազմին պարգացումները եւ վերահաստատեց Լիբանանի մերժողական կեցւածքը պատերազմին նկատմամբ:

Իր կարգին Քինչըն շեշտեց, որ իր կատարութիւնը համաձայն է օմանդակելու արաբեւիստայէական տագնապի լուծման եւ պաղեստինեւիստայէական տագնապի լուծման:

Եան տագնապը լուծելու համար վերսկսիլ խաղաղութեան գործընթացին, «սակայն իրաքի կացութիւնը բոլորովին այլ հարց է Բրիտանիոյ համար», ըսաւ ան:

Քինչըն շեշտեց, որ պատերազմը իրաքի դէմ չէ, այլ՝ իրաքի վարչակարգին դէմ: Ան ցաւ յայտնեց զոհ զացող քաղաքացիներուն համար, այսուհանդերձ վայն նկատելով բնական երելոյթ որեւէ պատերազմի ընթացքին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ԱՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի իրանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտ երէկ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Սուրիոյ փոխ վարչապետ եւ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէիի հետ: Քննարկուի առարկայ դարձան իրաքի դէմ ամերիկեւերի տանկային պատերազմին առնչուող հարցեր:

●ՄՇԱԿՈՅԹԻ նախարար Ղասսան Սալամէ երէկ իր գրասենեակին մէջ ընդունեց երեսփոխան Ալման Շըքէլը, որուն հետ քննարկեց մշակութային հարցեր եւ մշակութային ձեռնարկներու նախապատրաստութիւնները:

●ՀԸՉՊԱԼԼԱՅԻ հոգեւոր պետ շէյխ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալլա երէկ յայտարարեց, որ Միացեալ Նահանգներ բարեսիրական հաստատութիւն չեն, որպէսզի իրաքը գրաւելէն ետք վայն յանձնեն իրաքեան ընդդիմութեան: Ան ըսաւ, որ Ուաշինկթըն ոչ մէկուն հետ երկխօսութիւն կը կատարէ եւ ինքզինք բոլորին կը պարտադրէ երկխօսութեան անուան տակ:

●ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ միւլթի շէյխ Մոհամէտ Ռաշիտ Քապպանի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ ղեկավար Պորիս Պոլոթինը, որուն յայտնեց, թէ Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա իրենք զիրենք մենատէր կը նկատեն բայց տակաւին չեն զգար, թէ իրաքի մէջ որքա՞ն անակնկալներ կը սպասեն իրենց:


Պոլոթին իր կարգին յայտնեց, որ իրաքի դէմ պատերազմին հետեւանքները միջազգային յարաբերութիւններու իմաստով խիստ մտահոգիչ են:

●ԸՆԿԵՐՎԱՐ Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ուալիտ Ժոնպլաթ երէկ հանդիպում մը ունեցաւ քրտական միութիւններու եւ կուսակցութիւններու ներկայացուցիչներուն հետ: քննարկուեցան իրաքի դէմ պատերազմը եւ հոն շարունակուող բռնարարները: Ժոնպլաթ կոչ ուղղեց իրաքի մէջ քիւրտ ղեկավարներ Մեհուտ Պարպանիի եւ Ժալալ Թալպանիի՝ զուշ ըլլալու ամերիկեան քաղաքականութեան, որ կ'ուզէ պատակտել շրջանը եւ ոչ մէկը խնայել:

Ժոնպլաթ նկատել տուաւ, որ եթէ Ուաշինկթընի բռնարարները յաջողին իրաքի մէջ, ապա կարգը կը հասնի Լիբանանի եւ Սուրիոյ: «Արաբական իրաւասլով ժողովրդավարութիւնը նախընտրելի է, քան ամերիկեան իրաւասլով ժողովրդավարութիւնը», ըսաւ ան:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿԸ ՇԵՇՏԵ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ...

Շարունակուած 2րդ էջէն



Լահուտ եւ Միշել Մըր

Նախագահ Լահուտ երէկ ընդունեց նախկին փոխ վարչապետ, երեսփոխան Միշել Մըրը, որուն հետ քննարկեց ներքին իրադարձութիւնները եւ զարգացումները, ինչպէս նաեւ Մեթնի կարիքները:

Նախագահ Լահուտի այցելեցին աշխատանքի եւ հանրօգուտ շինութեանց ու փոխադրութեան հարցերու նախարարներ Ալի Քանսո եւ Նեժիպ Միքաթի:

Քննարկուի առարկայ դարձան երկրին ընդհանուր վիճակը, յատկապէս նշեալ նախարարութեանց առնչուող հարցերը:

Նախագահական պալատի այցելուներ էին նաեւ արդարութեան նախարար Սամիր Ժաւր եւ երեսփոխան Ղասսան Մըխայպէր:

ԳԵՈՐԳ ՍԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գ. Ս. Գ. Մրցանակի դատարանը կը յայտնէ, թէ բացուած է 2003ի համար 6րդ գործեր ներկայացնելու շրջանը:

Գ. Ս. Գ. Մրցանակը կ'ընդունի գրական թէ ուսումնասիրական որեւէ ցոր, անտիպ, կամ գիրքի ձեւին տակ ցարդ լոյս չտեսած գործեր առ ի զգահատում եւ հրատարակութիւն:

Գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական եւ հայ մշակոյթի այլ կալուածներուն վերաբերող գործերը, հայերէն կամ օտար լեզուներով գրուած, պէտք է դատակազմին հասան ըլլան ամենաուշը մինչեւ 31 Մայիս 2003:

Առաքուած գործերը պէտք է ըլլան մեքենագրուած եւ երէք օրինակով: Դատակազմին կողմէ զգահատուած գործերը կ'արժանանան հրատարակութեան:

Վեհափառ հայրապետին նախագահութեամբ դատակազմին մաս կը կազմեն՝ Արտաւազ արք. Թրքեան, Չարեհ արք. Ազնաւորեան, տիար Գեորգ Գանտահարեան (ատենապետ), տիար Պէպօ Սիմոնեան (ատենադպիր), տրք. Արմենակ Եղիայեան, տիար Պօղոս Սնապեան եւ տիար Ժիրայր Դանիելեան:

Դատակազմին հասցեն.-
Armenian Catholicosate of Cilicia
P. O. Box 70317
Antelias - Lebanon
E - Mail: cathcil@cathcil.org
Fax: +961 - 4 - 419 724

Դիւան
Գ. Ս. Գ. Ս.ի Դատակազմ

ԾԱՆՕԹ.- Դատակազմին ղրկուած գործերը հեղինակին չեն վերադարձուիր:

السفير | النجم | الزمان | المستقبل | الانوار

السفير

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

31 Մարտի տեղական օրաթերթերը լուսարձակի տակ առած են իրաքեան պատերազմը, իրաքի քաղաքացիներուն ապրած տառապանքն ու ցարը, Ամերիկայի ու Բրիտանիոյ զինուորական պատասխանատուներուն եւ քաղաքական անձնաւորութիւններուն կատարած յայտարարութիւնները: Թերթերը նաեւ անդրադարձած են պաղեստինեան անձնապատասխան գործողութեան:

«Լիուս» գրած է, թէ ամերիկեան ղեկավարութեան մէջ տարակարծութիւններ կը խանգարեն պատերազմին քարտէսները: Երկու ուղղաթիւներ վար անուեցան եւ չորս զինուորներ սպանուեցան, իսկ Ռամաֆէլտ ճնշում կը բանեցնէ ռմբակոծումները շարունակելու համար: Քուէյթի մէջ 15 ամերիկացիներ վիրաւորուեցան բեռնակառքի մը արկածին հետեւանքով:

Թերթին համաձայն, Շարէի յայտարարեց, որ Սուրիոյ շահերը կը կայանան ամերիկեան եւ բրիտանական ուժերու իրաքէն վտարումին մէջ:

«Մուսքաթալ»-ի համաձայն, արաբ մաւորներ են անձնասպանական գործողութիւններ կատարողներ իրաք մեկնեցան, իսկ 15 ամերիկացիներ վիրաւորուեցան Քուէյթի մէջ բեռնատարի մը պայթումին պատճառով: Ըստ թերթին, ամերիկեան ուժերը առանց յստակ ծրագրումի կը հարուածեն Պաղտատը, իսկ Փենթագոնի մէջ լեղափոխութեան մը հաւանականութեան մասին շշուկներ շրջան կ'ընեն:

«Տիար»-ի համաձայն, ամերիկեան ցամաքային յարձակումները կը դադրին եւ կը վերածուին օդային ռմբակոծումներու: Չինուորական ծրագիրներու շուրջ անհամաձայնութիւն եւ տարակարծութիւն՝ Ռամաֆէլտի եւ Փաուրլիի միջեւ: Եգիպտական շուկան կը ճնշէ եւ անձնասպանական գործողութիւններ կատարողներ կը հասնին իրաք՝ զոհուելու պատրաստակամութեամբ:

Ըստ թերթին, Սուրիոյ մէջ լրագրողներ ցոյց կատարեցին առ ի պարակցութիւն իրաքի ժողովուրդին: 120 հազար զինուորներէ բաղկացած նոր զուճեր պատրաստ են Օոց ուղղուելու: Ուաշինկթըն կ'որոշէ նոր ուժ ղրկել շրջան եւ անոնք կը նկատուին ամէնէն պարտուր եւ արդիական զուճերը, նշած է օրաթերթը:

«Տիար» լուսարձակի տակ առած է ամերիկացի պարավարին յայտարարութիւնը, ըստ որուն, բուն յարձակումներն

ու կոտորածները տակաւին չերեցան: Թերթը գրած է, թէ ամերիկացիները տակաւին կը շարունակեն իրենց ապարդիւն փորձերը կործանարար պէքերու գոյութեան մասին ապացոյցներ գտնելու համար:

«Սաֆիր» նշած է, թէ իրաքը բռնագրաւուող ուժերը կը վախնան անձնասպանական գործողութիւններէ եւ կը սաստկացնեն Պաղտատի դէմ իրենց յարձակումները: Ամերիկացի պարավարները Ռամաֆէլտը կ'ամբաստանեն բանակը աղէտին մէջ մխրձելու յանցանքով: Իսլամական Ժիհադի ընդհանուր քարտուղար Ռամատան Ապտալլա Շալաի հաղորդեց, որ իր անդամներէն մեծ թիւով խմբակ մը իրաք մեկնած է անձնասպանական գործողութիւններ կատարելու համար:

Թերթը գրած է, թէ Յովհաննէս Պօղոս Բ. պապը յայտարարած է, թէ պատերազմը կը նուազեցնէ փայլուն եւ բարգաւաճ ապագայի նկատմամբ յոյսերը:

«Նահար» նշած է, թէ Ռամաֆէլտ յայտարարեց, որ պարավար Ֆրանսիս մշակած ծրագիրը պիտի չկատարուի:

Ըստ թերթին, Ռամաֆէլտ զոհ պիտի երթայ, եթէ կացութիւնը շարունակուի ինչպէս որ է:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ դէպի մայրաքաղաք յառաջիադաքի կատարուած շաբաթներ պիտի տեւէ, յստակ ծրագրումի կը հարուածեն Պաղտատը, իսկ Փենթագոնի մէջ լեղափոխութեան մը հաւանականութեան մասին շշուկներ շրջան կ'ընեն:

«Տիար»-ի համաձայն, ամերիկեան ցամաքային յարձակումները կը դադրին եւ կը վերածուին օդային ռմբակոծումներու:

Չինուորական ծրագիրներու շուրջ անհամաձայնութիւն եւ տարակարծութիւն՝ Ռամաֆէլտի եւ Փաուրլիի միջեւ: Եգիպտական շուկան կը ճնշէ եւ անձնասպանական գործողութիւններ կատարողներ կը հասնին իրաք՝ զոհուելու պատրաստակամութեամբ:

«Տիար» լուսարձակի տակ առած է ամերիկացի պարավարին յայտարարութիւնը, ըստ որուն, բուն յարձակումներն

ամառ: Թերթը նշած է, թէ Քուէյթի վարչակարգը կը պահանջէ Լիպիոյ ղեկավարման գործադարին հետացումը երկրէն:

«Անուար»-ի համաձայն, ցամաքային յառաջիադաքը կատարուելու առնչութեամբ ամերիկեան երկու աղբիւրներէ հակառակ լուրեր շրջան կ'ընեն եւ Ռամաֆէլտը կը փորձէ ինքզինք արդարացնել իրենց ուղղուած ամերիկեան հակաարձակումներուն հակապղէղով:

«Պայրաք» դիտել կու տայ, թէ ամերիկեան ղեկավարութիւնը կ'անստեղծ իր մշակած պիտուորական ծրագիրներուն նկատմամբ եղած քննադատութիւններէ: Ըստ թերթին, պատերազմը կը քողպեցնէ նախագահական ներքին տարակարծութիւնները:

Պաղտատի մասին հարցին մասին «Լիուս» գրած է, թէ Նաթանիոյ մէջ ֆիտալական գործողութեան մը իբրեւ արդիւնք վիրաւորուեցան 30 իսրայէլացիներ, որոնցմէ վեցը կը գտնուի ծանր վիճակի մէջ: Թերթին համաձայն, Ժիհադ յայտնեց իր պատասխանատուութիւնը:

«Տիար» նշած է, թէ Նաթանիոյ մէջ անձնասպանական գործողութեան մը զոհ կացան 30 իսրայէլացիներ:

Ըստ «Պայրաք»-ի, պաղեստինեան «ժողովրդավար ձակաւոր» կ'ընդունին, իսկ «Պաղեստինի Ապահակ պարտեան ձակաւոր» կը մերժէ մաս կազմել Ապտալլաի կատարութեան:

«ՈՒՍՏԻ ՕՐ» ԱՆԹԻԼԻԱՍԻ ԵՒ Ս. ԱԶԵՐՈՒ ՄԵԾԱՀԱՆԳԵՍ ԹԱՎՓՈՐ

Ս. Գրիգոր Լուսաւորչի Մուտն ի Վիրապի տօնին՝ «Անթիլիասի Ուխտի Օր»-ուան առիթով, Անթիլիաս Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենան հետեւեալ արարողութիւնները.

- ՇԱԲԱԹ. 5 ԱՊՐԻԼ
 - Առաւօտեան ժամը 9:30ին Ս. Պատարագ
 - Երեկոյեան ժամը 7:00ին, հսկումի արարողութիւն՝ ի պատրաստութիւն յաջորդ օրուան լուսաւորութեան:

- ԿԵՐԱԿԻ. 6 ԱՊՐԻԼ
 - Սուրբ եւ անճախ պատարագ, որուն պիտի հետեւի Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջով գլխաւորեան սրբազան մատուցներու բաժնորդ Անթիլիասի Մայրավազի շրջապակին մէջ, մասնակցութեամբ միաբան հայրերուն եւ քահանայիցի դասուն:

Պիտի պատարագ եւ քարոզ՝
ՕՇԱԿԱՆ Ս. ԱՐՔ. ՉՈՒՆՅԵԱՆ
Առաջնորդ Բարսեղայի Ամերիկայի Արեւելեան թեմին

Արարողութեանց եւ քաղաքի պիտի հանդիսանայ
Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ժամերգութիւն	ժամը 8:30ին
Պատարագ	ժամը 10:00ին
Քարոզ	ժամը 11:00ին
Ս. Ազնուր եւ այլ մատուցներու բաժնորդ	ժամը 11:30ին

Կը հրահրենք մեր ժողովուրդի բոլոր զաւակները՝ մասնակց դառնալու Ս. Գրիգոր Լուսաւորչի Ուխտի Օրուան:

ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՀԱՅՈՒՂԻ ՄԸ ԱՆՑԱԲ ԼԻՔԱՆԱՆԷՆ

(ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՄԻ Կ. ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆԻ ՀԵՏ)

Երբ խոսակցիդ ար-
ևեստագետ մըն է, պահ-
կը ջերմանայ, միտքերդ
կը լարուին, կը լսես զինք
կեղծոնացեալ չեստաբար-
րուկեամբ: Իսկ երբ ար-
ուեստագիտուհի մըն է
չնորհաշատ, ունկնդրե-
լու հանդիպել կը վերածուի
վայելքի:

Չրուցակիցս դերասա-
նուհի մըն է, որ ինքն իր
մէջ կը խտացնէ արուես-
տի տարբեր ընթացաու-
ներ, երգ, պար, աս-
մունք, սրամտութիւն,
գոր կրօններ կոչելի հիւ-
մըր: Նոր անուն մը,
չխտուած անուն մը չէ-
վաստակ ունի յիսնամ-
եայ: Այցելած է բազմա-
թիւ երկիրներ, չափած է
Եւրոպայի մայրաքաղաք-
ները, Միացեալ Նահանգ-
ները: Մերձաւոր ու Մի-
ջին Արեւելքի երկիրները:
Ահազին պաշար ամբա-
րած է փորձառութիւննե-
րու, իսկ իմաստութեան
լուր գինք պահպանած է
չարիքներէ, փորձանքնե-
րէ: Ու երբ գնահատենք,
այսինքն «գին մը տանք»,
իր կենսափորձի ամալին
ու խորութեան, արդիւն-
քը կ'ըլլայ «հինգ եւ խաչ»,
ըստ խորագրային արժե-
չափի թուանշանին, ինչ-
պէս կը յիշէ ինք զուար-
թախոհութեամբ:

38 տարի առաջ ան
հանդիպեցաւ նաեւ Լի-
բանանի թատերասէրնե-
րուն հետ, «Քաղինս տիւ
Լիպան» ի բեմերէն մին-
չեւ այլ ամպիոններ, ուր
կատարեց ու ցուցաբերեց
իր գարմանայի կարողու-
թիւնները՝ իբրեւ ողբեր-
գակ թէ կատարկերգակ
դերասանուհի, մինչեւ
իսկ իբրեւ մանչուկի մը
գերբ ստանձնած (Ուի-
լիամ Սարոյեանի «Իմ սիր-
տը լեռներու մէջ» թատե-
րախաղին մէջ, մանչուկ
ձոնիի դերով):

Երկարամեայ բաժա-
նու մէջ ետք ան բախտը
կ'ունենայ այցելելու
դարձեալ Լիբանան՝ իրեն
հետ բերելով յուշերու
հատոր մը՝ «Իմ կեանքի
հեքիաթը»: Գրողի շնորհ
մըն այ գումարած է իր
ունեցած կարողութիւն-
ներուն վրայ: Կր պատմէ
իր կեանքին հեքիաթը-
հեքիաթ մը, որ «հովիւն
աղջկան եւ իշխանին սի-
րտանէ հանդիպումը» չէ
եղած, այլ իր յաղթական
վերելքին առնթներ՝ ճա-
շակած է ցնցումներ,
սարսափներ, ենթար-
կուած է հալածանքի,
բայց ի վերջոյ փրկուած
է ստալինեան դժոխքնե-
րէն՝ շնորհիւ իր հօր ու
չքեղ, աւինքնող տաղան-
դին:

Այդ ամէնուն մասին
պատմած է վարդուհի
Վարդերեսեան, տեղ-տեղ
տողատակի, տեղ-տեղ
անկեղծ արտայայտու-
թեամբ, քաջաբար, եր-
բեմն խոր վշտով ու կար-
ծէք նաեւ՝ «ներդա-
մտութեան ու անյիշա-
չար ողիով»...

Կարողցինք իր «հեքիա-
թին յուշերը»: Դիտե-
ցինք իր խաղարկութիւնը
մեծ մօր դերով, սպանա-
ցի թատերասեր Ալե-
խանտրո Քաստանյի
«Մուրը կանգուն կը
մահանան» տրամին մէջ:
«Ազգակ» ի սիւնակնե-
րուն մէջ կը յաղթանայու-
ցինք հատորը՝ ամփոփ
տեղեկութիւններ տալով
այդ մասին: Ընդհանրա-
պէս գերասանակաւ իր
անցած ճանապարհին
մեկնաբանութիւնները
կատարած է վարդուհի
Վարդերեսեան՝ մատ-
նանշելով տաղանդաւոր
րեմադրիչներու (ռեժիսոր-
ներուն, իր յեղուով),

դերասաններուն, անոնց
կերպարներուն, տիպա-
րային յաջող մարմնաւո-
րումներուն:

Թէեւ կան ակնարկու-
թիւններ թեթեւ կերպով,
համայնափարակաւ
բռնատիրական վարչա-
կարգին մասին, բայց երբ
իրեն հետ եկանք դէմ դի-
մաց, ան եղաւ առաւել
սրտբաց ու պատմեց, թէ
ինչպիսի՞ դժուարին տա-
րիներ եղած են խորհրդա-
յին վարչաձեւին ենթա-
կայ ժողովուրդին հա-
մար, մինչեւ «ձնհալը»,
այսինքն՝ մինչեւ մեծ
բռնատիր Ստալինի մա-
հալը:

Իբրեւ ուղեւորահայ՝
18 տարեկանին գաղթած
է հայրենիք: Արդէն իսկ
Ռուսաստանի մէջ վկան
եղած էր իր սիրելի ու
ուսուցիչներուն, ազգային
վարժարանի կրթական
մշակներուն, որոնց մեծ
մասը Հայաստանէն
դուրս ելած դաշնակցա-
կան ազգային գործիչ-
ներ եղած էին, այդ օրե-
րուն կը տարուէին,
կ'աքորուէին Սիպրի:

Բացի այսպիսի ցաւա-
զին դրուագներէ, այլ
տիտուր երեւոյթներու
մասին ակնարկներ ունի
դերասանուհի հեղինա-
կը: Ցաւով, վշտահար
հոգեով գրած է թատրո-
նի մեծ վարպետ, անգու-
պական բեմադրիչ Վար-
դան Աճէմեանի շնոր-
հազրկման մասին, թատ-
րոնի ծանօթ անձնաւո-
րութիւններուն նենգամը-
տութեամբ եւ նախան-
ձով: Այս մասին վերա-
պահուցեալ թատրոնի
կ'իմանաք: Դուք հոս ու-
նիք այդ զիրքէն. երանի
թէ հետո քանի մը օրի-
նակ բերէի:

Ի՞նչ տպաւորութիւն
քաղեցիք Պէտրութի այս
նոր հանդիպումէն:
Հիանալի: Թէեւ քա-
ղաքի հայուկեան թիւը
նօսրացած է, բայց ջեր-
մութիւնը մնացած է նոյ-
նը: Երանի թէ գիրքս
աւարտած ու հրատարա-
կած չըլլայի, յուշերուն
պիտի աւելցնէի Պէտրութի
այս հանդիպումս, կ'ըսէ
ան:

Չրոյցի ընթացքին ակ-
նարկեց 1993 թուականի
Հայաստանի մէջ տիրող
անտանելի վիճակին,
խիստ ցուրտին, ու մեկ-
այս գողգոթման, այլեւ իր
ընտանիքին անդամները,
ամուսինը՝ Գէորգ
Ապաճեան, հարազատե-
լու, ու դեռ շատ շատեր,
դառն ճակատագիրը
պարտազրաբար ընդու-
նած ազգայիններ:

Իր յուշերուն ընթեր-
ցումը, «Յ. Տէր Մելքոն-
եան» թատերասրահին
մէջ իր մասնակցութիւնը
Համազգայինի Այնճարի
«Պարոյր Սեւակ» մաս-
նաճիւղի «Լուսարձակ
40»-ին, մեծ մօր դերով,
ու արժանացաւ ներկայ
հանդիսակալներուն
ջերմ ու երկարատեւ ծա-
փահարութիւններուն, 22
եւ 23 Մարտ 2003ի երեկո-
ները, ապա՝ 27 Մարտ
2003ի երեկոյեան, «Վաս-
կեղարուական» սրահին մէջ
գեղարուեստական երե-
կոյթի մը ընթացքին իր
ներկայացուցած յայտա-
մար վարդուհի վարդե-
րեսեանի տաղանդին
բազմաշերտ երանգները:
Ան ներկայացուց գանա-
զան թատերախաղերու
իր ստանձնած դերերը,
ինչպէս՝ «Թաղականին
կնիկը», ապա՝ ամուսնեքի
իր շնորհները, որով մեկ-
նարանեց Աւետիս Ահա-
րոնեանի «Հագրէն», Շա-

հան Շահնուրի «Պճեղ մը
սիրտը», եւ դեռ Միաման-
թօ, Աւետիք Իսահակ-
եան, Համօ Սահեան: Ծա-
փահարեցինք վաստակա-
շատ արուեստագիտու-
հին, սրահ-բեմ ջերմ
մթնոլորտի հաղորդակա-
նութեամբ:

Կը բաւէ՞ր արդեօք
այսքան... Ո՛չ, բնաւ
չնկատեցինք, ու յաջորդ
առաւօտն իսկ յատուկ
ժամադրութեամբ ան ըն-
դունեց մեզ իր հիւրըն-
կալուած տան մէջ: Առա-
ւօտ կանուխ ներկայա-
ցանք իրեն, որովհետեւ
ժամանակ չկար, ու իր
մեկնումի օրը՝ մօտա-
լուտ:

Բեմէն դուրս արուես-
տագիտուհին տարբեր
անձնաւորութիւն մըն է.
այնքան պարզունակ,
անկեղծ ու ընտանիքի
մայր, ընկերասէր ու
մարդասէր: Ինքնագո-
վութեան ոչ մէկ աւելորդ
նշմար, հեզ է եւ ժուժ-
կալ. այս բոլորը զգացինք
ժամ մը մեր գրոյցին ըն-
կացքին: Հարցումներ
չուղեցինք իրեն, այլ բա-
րեկամական զրոյց մը, որ
կը կեղծոնանար ան-
շուշտ իր արուեստին,
դերասանական հիւրա-
խաղերուն, խաղընկերնե-
րուն: Ափսոսանքով կը
յիշէր անհետ հեռացած
ներք, դարձեալ փստոսաց
Վարդան Աճէմեանի վա-
ղաժամ կորուստին,
անոր գոհ մը ըլլալուն ու
կը կրկնէ:

Եթէ կարգաք Լեւոն
Հախվերդեանի գիրքը,
ամէն ճշմարտութիւն
կ'իմանաք: Դուք հոս ու-
նիք այդ զիրքէն. երանի
թէ հետո քանի մը օրի-
նակ բերէի:

Ի՞նչ տպաւորութիւն
քաղեցիք Պէտրութի այս
նոր հանդիպումէն:
Հիանալի: Թէեւ քա-
ղաքի հայուկեան թիւը
նօսրացած է, բայց ջեր-
մութիւնը մնացած է նոյ-
նը: Երանի թէ գիրքս
աւարտած ու հրատարա-
կած չըլլայի, յուշերուն
պիտի աւելցնէի Պէտրութի
այս հանդիպումս, կ'ըսէ
ան:

Չրոյցի ընթացքին ակ-
նարկեց 1993 թուականի
Հայաստանի մէջ տիրող
անտանելի վիճակին,
խիստ ցուրտին, ու մեկ-
այս գողգոթման, այլեւ իր
ընտանիքին անդամները,
ամուսինը՝ Գէորգ
Ապաճեան, հարազատե-
լու, ու դեռ շատ շատեր,
դառն ճակատագիրը
պարտազրաբար ընդու-
նած ազգայիններ:

Իր յուշերուն ընթեր-
ցումը, «Յ. Տէր Մելքոն-
եան» թատերասրահին
մէջ իր մասնակցութիւնը
Համազգայինի Այնճարի
«Պարոյր Սեւակ» մաս-
նաճիւղի «Լուսարձակ
40»-ին, մեծ մօր դերով,
ու արժանացաւ ներկայ
հանդիսակալներուն
ջերմ ու երկարատեւ ծա-
փահարութիւններուն, 22
եւ 23 Մարտ 2003ի երեկո-
ները, ապա՝ 27 Մարտ
2003ի երեկոյեան, «Վաս-
կեղարուական» սրահին մէջ
գեղարուեստական երե-
կոյթի մը ընթացքին իր
ներկայացուցած յայտա-
մար վարդուհի վարդե-
րեսեանի տաղանդին
բազմաշերտ երանգները:
Ան ներկայացուց գանա-
զան թատերախաղերու
իր ստանձնած դերերը,
ինչպէս՝ «Թաղականին
կնիկը», ապա՝ ամուսնեքի
իր շնորհները, որով մեկ-
նարանեց Աւետիս Ահա-
րոնեանի «Հագրէն», Շա-

ՊԵՏԻԿ ՀԵՐԿԵԼԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ 15ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԶԵՌՆԱՐԿ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ



Կիրակի, 30 Մարտ 2003, յաւարտ Ս. պատարագի,
Պետիկ Հեղեկեանի մահուան 15ամեակին առիթով,
հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ Ս.
Պողոս եկեղեցւոյ մէջ, որուն յաջորդեց յիշատակի
հանդիսութիւն, կազմակերպութեամբ Ազգային «Գ-
Կիւլպէնկեան» երկր. վրժ. Ծնողական Խորհուրդին,
«Գ. Կիւլպէնկեան» սրահին մէջ: Ներկայ էին մարմին-
ւօտ կանուխ ներկայա-
ցանք իրեն, որովհետեւ
ժամանակ չկար, ու իր
մեկնումի օրը՝ մօտա-
լուտ:

Բեմէն դուրս արուես-
տագիտուհին տարբեր
անձնաւորութիւն մըն է.
այնքան պարզունակ,
անկեղծ ու ընտանիքի
մայր, ընկերասէր ու
մարդասէր: Ինքնագո-
վութեան ոչ մէկ աւելորդ
նշմար, հեզ է եւ ժուժ-
կալ. այս բոլորը զգացինք
ժամ մը մեր գրոյցին ըն-
կացքին: Հարցումներ
չուղեցինք իրեն, այլ բա-
րեկամական զրոյց մը, որ
կը կեղծոնանար ան-
շուշտ իր արուեստին,
դերասանական հիւրա-
խաղերուն, խաղընկերնե-
րուն: Ափսոսանքով կը
յիշէր անհետ հեռացած
ներք, դարձեալ փստոսաց
Վարդան Աճէմեանի վա-
ղաժամ կորուստին,
անոր գոհ մը ըլլալուն ու
կը կրկնէ:

Եթէ կարգաք Լեւոն
Հախվերդեանի գիրքը,
ամէն ճշմարտութիւն
կ'իմանաք: Դուք հոս ու-
նիք այդ զիրքէն. երանի
թէ հետո քանի մը օրի-
նակ բերէի:

Ի՞նչ տպաւորութիւն
քաղեցիք Պէտրութի այս
նոր հանդիպումէն:
Հիանալի: Թէեւ քա-
ղաքի հայուկեան թիւը
նօսրացած է, բայց ջեր-
մութիւնը մնացած է նոյ-
նը: Երանի թէ գիրքս
աւարտած ու հրատարա-
կած չըլլայի, յուշերուն
պիտի աւելցնէի Պէտրութի
այս հանդիպումս, կ'ըսէ
ան:

Չրոյցի ընթացքին ակ-
նարկեց 1993 թուականի
Հայաստանի մէջ տիրող
անտանելի վիճակին,
խիստ ցուրտին, ու մեկ-
այս գողգոթման, այլեւ իր
